Պետրոս վարդ. ձեռնադրեալ 'ի Կ. Պոլիս. սա այժմ հիւանդ է.
Ստեփանոս դերապայծառ եպիսկոպոս Աւդերեան միաբան Պոլէհու սա 'ի տուն իւր նստի այժմ։

ՆԵՐՍԷՍ Ե ՇԱՀԱՆ ՋՐՊԵՏԻ ՄԱՍԻՆ

Վեհազնեայ Աղայ Խաչատուր Յովակիմեան
Ողորմած Տէր իմ.

Վասն Յակոբայ Շահան Ջրպետեանց համարիմ թէ՝ Դուք իսկ բարւոք գիտակ իցէք ի վաղուց ժամանակաց զի է նա ծնեալ ի Դիարպէքիր որ է Նդեսիայ ի հայ ծնողաց և ի տղայութեան իւրում աշակերտեալ Պօղոս անուն ուրումն վարդապետի ի միաբանութեանց Ս. Կարապետի վանիցն որ ի Մուշ. ընդ նմա գնացեալ է ի Հռովմ և ուսեալ զլեզու և զգրականութիւն գաղղիական. յետ մեռանելոյ վարդապետին իւրոյ ձեռնադրեցեալ է և ինքն վարդապետ և ի ժամանակի մըրկայոյզ խառնակութեանցն յԵրուսալէմ թողեալ զկրօնն ամուսնացեալ է ի Փարիզ և ի Նապոլէօնէ կարգեցեալ է ի գրատան թագաւորական ուսուցիչ Հայոց լեզուի և յամի 1819 ի գնալ ազնուական Աղայ Գէորգայ Երեմեան Արծրունւոյ վանեցւոյ ի Փարիզ յայտնեալ նմա վասն անփոփոխ ունելոյն զսէր և զջերմեռանդութիւն իւր առ եկեղեցի և առ ազգ Հայոց, գրեալ էր և առ մեզ ի Թիֆլիս յայտնութեամբ իւրոց առաւել ցանկութեանց վասն նուիրելոյ զմնացորդս կենաց իւրոց ի ծառայութիւն ազգի և եկեղեցւոյ հայրենեաց. միջնորդեալ էր մեզ առ այն և յիշեալ ազնուականն իւրով յատուկ դրութեամբ։ Եւ ի վերադառնալն յետս առ մեզ ի տուն իւր ի Թիֆլիզ զգրութիւն իւր առ Ջրպետեանն և զմիջնորդութիւն իւր առ մեզ հանապազորդէր ազնուականն ըստ ուրումն ազգասիրութեան, յորմէ հարկադրեալ կամ մանաւանդ ամաչեցեալ պարտաւորեցաք հրաւիրել զնա առ մեզ յամի 1824 ի Մարտի 24 գրութեամբ մերով և եկեալ առ մեզ յայտնեաց զանձն իւր անհամաձայն ձայնարկութեանցն անտի իւրոց ի Փարիզոյ և ջատագովութեանցն ազգասէր ազնուականին

և յետ վատնութեանցն ի զուր զգումար մեծ աւելի քան 22744 բուբլի դրամոց և արտաքոյ այնմ զանազան նիւթեղինաց և այլ և այլ արտաքին ծախուց մերոց վասն նորա, անխնամ եղեալ նաև իւրոց խղճմտանաց, զտաւ համակից ատեցողաց զանձն իմ և զամենայն զհասարակութիւն միաբանութեան ընդհանուր ազգի Հայոց և յորդորեալ ի նոցունց համարձակեցաւ լինել և խնդրամասոյց գրով առ Պայծառ կուսակալն գրաֆն Երևանայ յայտնելով նմա զպահանջողութիւն իւր առ ի մէնջ յետ նշանակեալ գումարացն վասն ծախուց ճանապարհորդութեան իւրոյ և երկու ամ և կէս կալոյն ի Թիֆլիզ ի մեծակառոյց սենեակսն մերում ուսումնարանի միւս ևս 22368 բուբ. զոր խնդրագիր առաւել առ Վոյեննոյ կուպերնատորն գրաֆն Երևանայ նորին կառավարութեամբ առ բաւականացուցանելոյ զայնքան վնասապարտն իմ զտկարամիտ Զրպետեանն, հաւանեցուցեալ էին զգործավարսն իմ անդէն ի Թիֆլիզ հատուցանել այլ ևս Պարոն Զրպետեանին 1200 մանէթ արծաթ, որ ըստ հաշուոյ Թիֆլիզոյ առնէ ասսիղնացի թղթադրամ 4800 բուբլի։

Եւ յետ այնորիկ ընկալայ զգիր ի մերոց գործավարաց թէ գրաֆն Երևանայ նշանակեալ վասն նորա ռոճիկ ամսական 100 մանէթ արծաթ կամի կարգել զնա ըստ ժամանակի ի վերայ Տէրութեան գործոյ և զկնի միջոցի ընկալայ զծանօթութիւն թէ խոստացեալ է նմա ընդհակառակն կարգել ընդհանրական կառավար մերում ուսումնարանի և յետ այնորիկ ևս լուայ թէ վերջացուցեալ զամսականն նշանակեալ նմա արձակեալ է զնա ի կալանաց իւրոց յուսադրութեանց, այլ ոչ մինչ այն երից լրոց չունիմ մինչև ցայսօր զհաւաստի տեղեկութիւն։

Ողջ լեր Տէրամբ և ես եմ և մնամ ճշմարիտ բարեկամութեամբ և իսկապէս վերապատուութեամբ միշտ

Զերում վեհազնութեան
խոնարհ ծառայ
Արքեպիսկոպոս Հայոց Ներսէս

№ 267
Ի 12 Նոյեմբ. 1830.
Ի Փիշնև